

# «ԿԱԹՆԱՎՈՎ ՄԱՏԱՂ»՝ ԱՆՁՐԵՎԱԲԵՐ ԵՎ ԱՆՁՐԵՎԱԽԱՓԱՆ ԾԵՍ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

## Ռոման Հովսեփյան

Կենսաբանական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Չարենցի 15  
Էլ. հասցե՝ roman.hovsepyan@iae.am

## Հասմիկ Աբրահամյան

Պատմական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Չարենցի 15  
Էլ. հասցե՝ hasmikabrahamyan@yandex.ru  
Հոդվածը ներկայացվել է 26.02.2022, գրախոսվել է 01.03.2022, ընդունվել է տպագրության 12.12.2022  
DOI: 10.53548/0320-8117-2022.3-349

## Ներածություն

Երկրագործական և անասնապահական տնտեսածներով ապրող ժողովուրդների համար ջուրն առաջնային նշանակություն ունի: Ջրից, մասնավորապես մթնոլորտային տեղումների քանակից և ժամանակից են կախված մշակաբույսերի բերքատվությունը և անասնակեր հանդիսացող բույսերի առատությունը, որից էլ՝ ընտանի կենդանիների կենսազանգված ավելացնելու գործընթացը, ծնելիությունը և կաթնատվությունը:

Մթնոլորտային երևույթները կարգավորելու, մասնավորապես անհրաժեշտ քանակով և որոշակի սեզոնի ընթացքում անձրև՝ ոռոգում ապահովելու անհրաժեշտությունը, ինչպես նաև անցանկալի տեղումները, մասնավորապես ավերիչ կարկուտները կանխելու անհրաժեշտությունը ծնունդ են տվել մի շարք ծեսերի, որոնք, հազարամյակներ գոյատևելով, հասել են մինչև մեր օրերը: Այդ ծեսերի կամ դրանց բացակայության ազդեցությունը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է իմանալ վերաբերմունքը մասնակիորեն պահպանվում է մինչ օրս: Անձրևաբեր, անձրևախափան և կարկուտախափան ծեսերի կամ դրանց մասին հիշողությունները հավելյալ աղբյուր են եղանակային պայմանների և գյուղատնտեսության ոլորտում գոյություն ունեցած իրավիճակի, ինչպես նաև տվյալ համայնքի ներկայացուցիչների ավանդույթների և աշխարհընկալման մասին պատկերացում կազմելու համար: Մթնոլորտային գործընթացները կարգավորելուն միտված և ջրօգտագործմանն առնչվող

ծեսերը և հավատալիքները մեր օրերում կորցրել են իրենց կարևորությունը, գրեթե չեն կիրառվում և մոռացման եզրին են, սակայն մինչև ոչ հեռավոր անցյալը դրանք «կենսական» նշանակություն են ունեցել՝ լինելով ժողովրդական մշակույթի կարևոր բաղադրիչ: Այս ծեսերի և հավատալիքների մասին գիտելիքի փաստագրումը և հետազոտությունը մշակութապահպան նշանակություն ունեն, իրենց բազմաշերտության շնորհիվ կիրառական են նաև այլ հումանիտար բնույթի հետազոտություններում և մարդու էկոլոգիայի ուսումնասիրության համար:

Հետազոտության թեման ընտրվել է՝ ելնելով Հայկական լեռնաշխարհում ջրօգտագործման մշակույթի հետազոտության համատեքստում եղանակին և գյուղատնտեսությանն առնչվող ծեսերի և հավատալիքների ուսումնասիրության կարևորությունից<sup>1</sup>:

### Մեթոդաբանություն

Հետազոտության թեման է անձրևաբեր և անձրևախափան «կաթնավով մատաղի» ծեսը: Հետազոտական նյութը հավաքվել է հիմնականում 2021-2022 թթ.-ին՝ Սյունիքի մարզի Գորիս (ք. Գորիս, գ. Վերիշեն, Քարահունջ, Ակներ, Խնձորեսկ) և Տեղ (գ. Տեղ, Քարաշեն, Խնածախ, Կոռնիձոր) համայնքներում մեր արշավախմբի կատարած դաշտային ազգագրական աշխատանքների ընթացքում<sup>2</sup>: Գրանցված նյութը հիմնականում բանասացների մանկական կամ պատանեկան շրջանների հիշողությունների ձևով է, թեև ծեսը որոշ համայնքներում կենցաղավարել է ընդհուպ մինչև վերջին տարիներին, իսկ Ակներ համայնքում՝ նաև մեր օրերում: Հիշողությունները՝ պատմությունների և պատումների ձևով, գրանցվել են անհատական և խմբային հարցումների ու խորացված հարցազրույցների մեթոդներով<sup>3</sup>: Ակներ համայնքում մեզ հաջողվել է ներկա գտնվել կաթնավով մատաղի ծեսի և ազգագրական նյութ գրանցել նաև անմիջական դիտարկումների միջոցով: Հարցազրույցների լավագույն դրվագների ամփոփումները տրվում են հոդվածի վերջում՝ Հավելվածով: Հարցազրույցները կողավորված են ըստ ամսաթվի և օրվա ընթացքում հերթականության. օրինակ՝ 210804–7a/2, որտեղ 210804-ը 2021 թ. օգոստոսի 4-ն է՝ հարցազրույցի անցկացման ամսաթիվը, 7-ը՝ տվյալ օրվա յոթերորդ հարցազրույցը, a-ն մատնանշում է հիմնական բանասացին (յուրաքանչյուր հարցազրույցում կարող են լինել նաև

<sup>1</sup> Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի 21AG-6A080 և 20TTSH-053 գիտական նախագծերի շրջանակում:

<sup>2</sup> Դաշտային աշխատանքներին մասնակցել են նաև մեր 20TTSH-053 նախագծի հետազոտական խմբի անդամներ Անի Սարատիկյանը և Նինա Ստեփանյան-Ղանդիլյանը:

<sup>3</sup> Hunt 2016, Winick et al. 2016 և այլն:

b, c, d և այլ բանասացներ, իսկ եթե լատինական տառով նշում չկա, ուրեմն հարցազրույցը մեկ բանասացի հետ է եղել, կամ հղում ենք ընդհանուր հարցազրույցին՝ առանց մասնավորեցնելու կոնկրետ բանասացի), իսկ /2-ը հոդվածի Հավելվածում տվյալ հարցազրույցի հղվող հատվածն է: Հարցազրույցներին մասնակցել են շուրջ երեք տասնյակ տեղացիներ վերոնշյալ համայնքներից:

Հոդվածում խմբավորված և ամփոփ ներկայացնում ենք «կաթնավով մատաղ» ծեսը՝ նույն համայնքի բանասացների պատմություններով փոխլրացնելով բաց թողնված մասերը: Բանասացների շարադրանքներում երեք և ավելի համընկնումների դեպքում, այսինքն՝ երբ կարելի է ենթադրել, որ համընդհանուր իրավիճակի մասին է խոսքը, կոնկրետ հարցազրույցները չենք նշում: Ընդհանուր իրավիճակից շեղվող կամ ընդհանուր իրավիճակի նկարագրությունը լրացնող ազգագրական տվյալների առկայության դեպքում նշում ենք կոնկրետ հարցազրույցը: Անհրաժեշտության դեպքում կամ երբեմն պարզապես առաջնային ազգագրական նյութը ներկայացնելու համար ուղղակի խոսքի ձևով մեջբերումներ ենք անում բանասացների պատմություններից (տե՛ս հոդվածի Հավելվածը): Ամենաշատ տեղեկություն հաղորդող որոշ հարցազրույցների բովանդակությունների շարադրանքը տալիս ենք Հավելվածում:

Հետազոտության առաջնային նպատակն է ազգագրության միջոցով ջրօգտագործման մշակութային գործընթացների և երևույթների մասին տվյալներ հավաքելը, ապա դրանց վերլուծության և տեսական վերակազմությունների միջոցով մարդկային հասարակությունների կողմից ջրային պաշարների հայթայթման և օգտագործման ռազմավարությունների մասին պատկերացում կազմելը: Հետազոտության նպատակներից է նաև գրանցել և պահպանել անձրևաբեր, անձրևախափան և կարկտախափան ծեսերը և հավատալիքները՝ որպես անցյալում «կենսական» կարևորություն և հանրայնություն ունեցած, բայց մեր օրերում անհետացող պրակտիկա, ինչպես նաև որպես Հայաստանի մշակութային ժառանգության բաղադրիչ:

### ***Ազգագրական տվյալները և դրանց վերլուծությունը***

#### ***Ծեսի ամփոփ նկարագիրը՝ ըստ ազգագրական (առաջնային) նյութերի***

*Անունը. «Կաթնավով (կաթնովով) մատաղ»*

*Նպատակը. անձրևաբեր/անձրևախափան*

*Ժողովրդական մեկնաբանությունը. «մատաղ անել»*

*Աշխարհագրությունը*. Սյունիքի Գորիս համայնքի Գորիս քաղաք, Վերիշեն, Ակներ, Քարահունջ և Խնձորեսկ գյուղեր և Տեղ համայնքի Տեղ, Քարաշեն, Խնածախ և Կոռնիձոր գյուղեր

*Ընդգրկունությունը*. համայնքային

*Հիմնական ֆիզուրանյութերը/առարկաները*. կաթը, հացահատիկը

*Հասցեատերերը*. Աստված և երկինք

*Կազմակերպիչները*. տարեց կանայք

*Կատարողները*. տարեց կանայք, երեխաները և պատանիները՝ աղջիկ, տղա

*Այլ մասնակիցներ*. համայնքի բոլոր անդամները, անձանոթ անցորդները

*Կատարման տեղը*. գյուղամիջում, եկեղեցու բակում, խաչմերուկում, ճանապարհին

*Կատարման ժամանակը և հաճախականությունը*. որոշակի ժամանակ չկա՝ ըստ անհրաժեշտության

*Կենցաղավարումը*. հիմնականում մինչև 1990-ականները, որոշ համայնքներում՝ մինչև 2010-ականները, գ. Ակներում՝ նաև մեր օրերում:

**«Կաթնավով մատաղ»** ծեսի առանցքում կաթնով եփելն է և բանասացների բնորոշմամբ՝ որպես մատաղ բաժանելը: Նույն ծեսն ունեցել է երկու տարբեր՝ հակադիր գործառույթներ՝ անձրևաբեր և անձրևախափան:

Ծեսի համար պատրաստվող կաթնովը պարզ ուտեստ է, որի հիմնական բաղադրիչներն են կաթը, բրինձը (*Oryza sativa*) և (կամ) հաճարի (*Triticum dicoccum*) ձավարը: Թույլատրելի է համարվում ըստ ճաշակի ավելացնել աղ, շաքար և յուղ՝ կարագ կամ ձեթ:

2017 թվականից Սյունիքում կատարվող ազգագրական, բանահավաքչական աշխատանքների ընթացքում հետազոտվել են մի քանի տասնյակ գյուղեր մարզի բոլոր վարչական համայնքներում (Մեղրի, Քաջարան, Կապան, Տեղ, Գորիս, Տաթև, Սիսիան և Գորհայք), սակայն «կաթնավով մատաղ» ծեսը գրանցվել է միայն Գորիս և Տեղ համայնքներում: Այլ համայնքներում կաթնով պատրաստելը եղել է այլ անձրևաբեր և անձրևախափան ծեսերի մաս:

Արարողությունը համայնքային մասշտաբի է եղել: Այն հստակ ժամկետներ, տևողություն և ժամանակային այլ սահմանափակումներ չի ունեցել, կազմակերպել և կատարել են ըստ անհրաժեշտության. անձրևային եղանակների երկարատև շարունակականության դեպքում, մանավանդ եթե դա բերքահավաքի սեզոնին է, ծեսը կատարվել է անձրևախափան, իսկ երաշտների դեպքում՝ անձրևաբեր նպատակով: Ծեսի կազմակերպիչները եղել են

տարեց կանայք կամ կոնկրետ մի տարեց կին, սովորաբար համայնքում մեծ հարգանք վայելող, որը համայնքի կողմից ընդունված պատասխանատու է եղել «կաթնավով մատաղ» ծեսի կազմակերպման և իրագործման համար: Բանասացները շեշտում են կաթնավով ճաշ եփող կնոջ «մաքուր», մաքրասեր լինելու անհրաժեշտությունը: Կաթնով պատրաստող կանանց կույս, ամուսնացած կամ այրի լինելու հետ կապված նախապայմաններ բանասացները չեն նշել: Կաթնով եփելու արարողությանը նախորդել է համայնքի աղջիկ և տղա երեխաների և պատանիների կողմից կաթնովի հումքի, մասնավորապես՝ կաթի և հացահատիկեղենի հավաքը: Կաթնովի հումքը պետք է հավաքվեր առնվազն յոթ տնից:

Թեև ծեսի իրագործման համար եղել է հիմնական դերերի որոշակի բաշխում (մի կամ մի քանի տարեց կանայք երեխաների միջոցով կազմակերպել են սննդամթերքի հավաքը, կաթնովի պատրաստումը և բաժանումը), այն համայնքային ընդգրկունություն է ունեցել: «Կաթնավի» պատրաստումը կազմակերպվել է գյուղի ամենաբանուկ հատվածներում՝ գյուղամիջում, եկեղեցու բակում<sup>4</sup>, ամենաբանուկ ճանապարհի կամ խաչմերուկի վրա կամ երբեմն արարողությունը կազմակերպող կանանցից մեկի տանը<sup>5</sup>: Կաթնովը եփելու համար օգտագործել են մեծ կաթսաներ՝ 40 լիտր տարողությամբ մեկ կամ մի քանի կաթսա: Հաճախ կաթնովի մեջ աղ կամ շաքարավազ չեն ավելացրել<sup>6</sup>: Կաթնովը եփելուց աղոթքներ և բարեմաղթանքներ են ասել: Արարողությանը միացողները ևս բարեմաղթանքներ են ասել, մասնավորապես՝ «Մատաղը ընդունելի լինի»<sup>7</sup>: Համայնքի անդամները հավաքվել են եփվող կաթնովի շուրջը, շփվել, գյուղի անցուդարձը քննարկել, պատմություններ պատմել և փորձը փոխանակել<sup>8</sup>: Հատկապես խրախուսվել է երեխաների մասնակցությունը: Կաթնովը եփելուց հետո այն պետք է բաժանվեր առնվազն յոթ տեղ (տարբեր տներ կամ նույն տանը չքնակվող մարդկանց): Բանասացները հատկապես նշում են երեխաներին (երեխաները իրենց ամաններով մոտեցել են կաթսային և ստացել իրենց բաժինները) և կաթնովի պատրաստման վայրի մոտով անցնող-դարձող ծանոթ-անծանոթներին բաժին հանելը: Բաժին են ուղարկել այն համագյուղացիներին, որոնք ներկա չեն եղել կաթնովի արարողությանը: Ըստ ցանկության՝ ամեն մեկն իրեն բաժին հասած կաթնովի մեջ կարագ է ավելացրել: Ծեսը աստիճանաբար

<sup>4</sup> Քարահունջ և Խնձորեսկ գյուղերում անձրևի համար կենդանու կամ կաթնովով մատաղ արել են տվյալ գյուղի Սբ Հովհաննես եկեղեցու բակում:

<sup>5</sup> Ակներ գյուղում կաթնովով մատաղ են արել թե՛ գյուղում, թե՛ սարում:

<sup>6</sup> Կաթնովի մեջ շաքարավազ կամ աղ չավելացնելը ևս այն որպես գոհաբերություն/մատաղ ընկալելու ցուցիչ է:

<sup>7</sup> Ակներ, 220518-2:

<sup>8</sup> Ակներ գյուղում նաև հարսնացու գտնելու փորձ էին անում (220518-2):

դադարել է կենցաղավարվել 1960-ական թվականներից, սակայն շարունակել է իր գոյությունը պահպանել մինչև XXI դարի սկիզբը: Բանասացները նշում են, որ մեր օրերում ծեսը չի կատարվում, կամ որ վերջին անգամ մի քանի տարի առաջ են արել: Այս պրակտիկայով անձրև կամ դրա դադար ակնկալում են «Աստվածից», որը երկնքում է:

Այսպիսով, ի լրումն բանասացների կողմից կաթնով եփելու ծեսը բառացիորեն *մաքաղ* անվանելուն և այն որպես մատաղ ընկալելուն, ծեսն ունի մատաղին բնորոշ մի քանի հատկանիշ ևս՝ ծեսի համայնքային լինելը, կաթնովի հումքի առնվազն յոթ տնից հավաքելը և յոթ տեղ բաժանելը, կաթնովին համեմունք չավելացնելը և բոլորին բաժին հանելը՝ առաջնահերթությունը երեխաներին և պատահական մարդկանց տալով, և այլն, որոնք լրացուցիչ վկայում են, որ այդ ծեսը եղել է զոհաբերություն: Թեև առաջնային ազգագրական նյութերում բանասացները նշում են, որ այս զոհաբերություն-մատաղը արել են անձրևի գալու կամ կտրվելու համար, ակնհայտ է, որ զոհաբերություն անողների համար ակնկալվող վերջնարդյունքը ոչ թե հենց անձրևը կամ ջուրն է, այլ այն, ինչ կարող է տալ կամ փչացնել կամ ինչի վրա կարող է ազդել այդ ջուրը (անձրևը, կարկուտը): Հարցազրույցներում ուղղակիորեն կամ անուղղակիորեն նշվում է (տե՛ս Հավելվածը) անձրևի (ջրի) ազդեցությունը բուսաբուծության ոլորտի վրա, որը ցույց է տալիս բուսական հումքի արտադրության առաջնահերթությունը տվյալ համայնքների համար և վերջիններիս երկրագործական մշակույթի ներկայացուցիչ լինելը<sup>9</sup>: Տրամաբանական կլինի ենթադրել, որ զոհաբերության՝ մատաղի համար ընտրված կաթնովի, մասնավորապես դրա բաղադրիչների՝ կաթի և հացահատիկեղենի ընտրությունը պատահական չէ: Կաթը անասնապահական գործունեության արտադրանքի հիմնական վերջնարդյունքն է, իսկ հացահատիկեղենը՝ երկրագործական արտադրանքի: Կաթնովով մատաղում այս երկու բաղադրիչները՝ կաթը և հացահատիկեղենը, խորհրդանշական գործառույթ ունեն և կիրառվել են թերևս թե՛ խորհրդանշական իմաստով՝ նպաստավոր անասնապահական պայմանների (կաթ) և նպաստավոր երկրագործական պայմանների համար (հացահատիկ), թե՛ զոհաբերվող ապրանքը այդ նույնի (կաթը՝ կաթի, հացահատիկեղենը՝ հացահատիկեղենի) բազմապատիկի դիմաց ակնկալիքներով<sup>10</sup>:

<sup>9</sup> Հայաստանի եզդիների և քրդերի շրջանում, օրինակ, անձրևը կարևորվում է նաև անասնապահության համար անհրաժեշտ խոտ ապահովելու տեսանկյունից, ավելին՝ որոշ բանասացներ կարևորում են հենց միայն անասնաբուծությանը հասցվող օգուտի կամ վնասի տեսանկյունից (Հովսեփյան 2017):

<sup>10</sup> Ասվածը հաստատում են նաև հետևյալ օրինակները. Լեռնային Ղարաբաղում շատերը կաթնովը եփել են արտերի միջնակներում (արտի վարած տեղերի միջև ավար մնացած մասում) և դրանով ցողել են հողամասի շուրջը, որպեսզի նպաստեն բերքաճին և ցանքսերը պահպանեն մորեխից,

Ընդհանուր առմամբ, կաթի հետ կապված, այդ թվում՝ կաթի առատացմանը և կաթի միջոցով բերքառատությանը նպաստող մի շարք ծեսեր կան<sup>11</sup>: Որպես հանապազօրյա կենսական արժեք՝ հաճախ կաթի հետ զուգորդվել է առհասարակ բերքը (արտի, այգու, մեղվի և այլնի)<sup>12</sup>: Կենսական կարևոր բուժիչ հատկությունների շնորհիվ կաթնամթերքը ժողովրդական հավատալիքներում հանդես է գալիս նաև որպես չարխափան միջոց<sup>13</sup>:

Ըստ ներկա ազգագրական նյութերի՝ այլ անձրևաբեր կամ անձրևախափան ծեսերից կաթնովով մատաղին ամենասերտորենը առնչվում է տիկնիկ պատեցնելը:

### Տիկնիկ պատեցնելը

Համայնքում տիկնիկ պատեցնելու պրակտիկան Սյունիքում և ընդհանրապես Հայաստանում և ողջ տարածաշրջանում ամենատարածված անձրևի ծեսերից է:<sup>14</sup> Թեև տիկնիկի գործառույթը նույնական է գրեթե ամենուր, Սյունիքի տարբեր համայնքներում այն տարբեր անվանում է ունեցել. Անգեղակոթում՝ Չամչախաթուն, Շինուհայրում՝ Գողի, Տաթևի գյուղերում՝ Ղողի<sup>15</sup>, Շիկահողում, Արցախում՝ Ճոլի<sup>16</sup> և այլն<sup>17</sup>:

Ստորև մանրամասն անդրադառնանք Չամչախաթուն տարբերակին: «Չամչախաթուն» բառի հիմքում իրանական «չամչա», թուրքական «չեմչա» բառերն են, որոնք «գդալ» են նշանակում<sup>18</sup>, և «խաթուն» բառը, որն արևելյան

կարկուտից, երաշտից ու այլ աղետներից (Լիսիցյան 1981, 71): Ջրին հատիկեղեն զոհաբերելով՝ կանանց, ինչպես նաև կովերի կաթն առատացնելու դրսևորում է Աղանձ աղբյուրում աղանձ շաղ տալը (Խանգադյան 1984, 298): Համբարձման տոնին կոունկը խաղողի ողկույզ է բերել վանահորը և հարիսա եփել տվել (Սրուանձտեան 1874, 105-106): Հմտ. Աթայեան 1906, 188: Ուշագրավ է, որ «Կաթի տոն» անվամբ համանման ծես եղել է Կոստանդնուպոլսից ոչ հեռու գտնվող Օրթաքյոյ և Խուդին ավաններում ապրող քաղկեդոնական հայերի շրջանում: Համբարձման տոնին ամեն ընտանիք պատրաստել է կաթով և ցորենով աղացած մածուկ, որը ճաշակել են ընտանիքի բոլոր անդամները: Եթե աղքատ ընտանիքները չեն կարողացել կաթ ձեռք բերել, ապա վերցրել են հարևաններից, որ այդ սուրբ ծեսի կատարումից անմասն չմնան (Բարթիկյան 2008, 249): Այդ ծեսն առնչվում է Կիրելայի պաշտամունքին (Բարթիկյան 2008, 249): Իսկ ըստ հռոմեական դիցաբանության՝ Կիրելան ցանքի և հունձքի աստվածուհին է (Мифы народов мира 2008, 530):

<sup>11</sup> Խտրերեան 1918, 27: Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1967, 276:

<sup>12</sup> Հարությունյան 2018, 367:

<sup>13</sup> Հարությունյան 2018, 368:

<sup>14</sup> Մեր սեփական բանահավաքչական նյութերը, Սյունիք, 2017-2022, Լիսիցյան 1969, 129, Հովսեփյան 2017, 114-146, Հայրապետյան 2004, 217-227 և այլն:

<sup>15</sup> Hovsepyan 2018.

<sup>16</sup> Բդոյան 1972, 495:

<sup>17</sup> Մանրամասների համար՝ Պետրոսյան 2021, 62-63:

<sup>18</sup> Հ. Աճառյանը, մեջբերելով հայսմավորքյան վկայություն, բացատրում է *չամչաշերեփ* բառը, որը նշանակում է մեծ շերեփ, խոշոր գդալ: «Չամչա» բառի պարսկերեն և թուրքերեն համարժեքները նույնպես շերեփ իմաստն ունեն (Աճառեան 1926, հ. 3, 626): Նույն հարցին անդրադարձել է նաև Է. Պետրոսյանը (2021, 66):

լեզուներում նշանակում է «տիկին, մեծ կին, թագուհի, ազնվական կին»<sup>19</sup>: Տիկնիկ պտտեցնելու ծեսում հետազոտողները հիմնականում տիկնիկը մեկնաբանում են որպես ջրի տարերքի աստվածուհու խորհրդանշան<sup>20</sup>: Այդ համատեքստում է նաև «չամչախաթուն» անվան «խաթուն» արմատի «տիկին, մեծ կին, թագուհի, ազնվական կին» նշանակությունը: Հայտնի է, որ անձրևի ծեսերի տիկնիկը հաճախ պատրաստվել է նաև գդալից, շերեփից և ունեցել է կնոջ կերպարանք<sup>21</sup>: Նաև նշենք, որ Հայաստանի շատ համայնքներում և հենց Այունիքում անձրևաբեր կամ անձրևախափան նպատակներով տիկնիկ պտտեցնելու ծեսի մաս (սովորաբար՝ ավարտական) է եղել հենց կաթնով պատրաստված և ծեսի մասնակիցներով կամ ամբողջ համայնքով ուտելը<sup>22</sup>: Սակայն, ինչպես տեսնում ենք հենց «Կաթնավով մատաղ» ծեսի օրինակով, այս երկու պրակտիկաները եղել են նաև ինքնուրույն տարբերակներով: Իհարկե, հնարավոր է, որ դրանք ի սկզբանե երկու տարբեր պրակտիկաներ են եղել, որոնք հետագայում որոշ համայնքներում միաձուլվել են և ժամանակի ընթացքում ամրապնդվել ավանդույթներում: Սակայն հնարավոր է նաև, որ շերեփով պատրաստած տիկնիկ պտտեցնելու և կաթնով պատրաստված ծեսական պրակտիկաները ի սկզբանե եղել են նույն ծեսի մասեր: Տիկնիկ պտտեցնելը և կաթնով եփելը մեկ ընդհանուր ծեսի բաղադրիչներ լինելու մասին է վկայում նաև այն, որ հարևան համայնքներում «Կաթնավով մատաղ» անվամբ հայտնի ծեսը Հին Խնձորեսկում կոչվել է Խաժածոլի<sup>23</sup> կամ Խաչածոլի<sup>24</sup>, որտեղ «խաչ» բաղադրիչը թերևս վերաբերվում է տիկնիկի խաչածն պատրաստված լինելուն, իսկ «ծոլի»/«ճոլի» բաղադրիչը ըստ ամենայնի համապատասխանում է տիկնիկ պտտեցնելու ծեսի և տիկնիկի անվան ճոլի/ճոլի տարբերակներին<sup>25</sup>: «Կաթնավով մատաղ» տիկնիկ պտտեցնելու ծեսի պես ունեցել է թե՛ անձրևաբեր, թե՛ անձրևախափան, այսինքն՝ երկակի գործառույթ, որը լրացուցիչ փաստարկ է այն բանի, որ նշված ծեսերը կարող են միևնույն ծեսի բաղադրիչները լինել:

<sup>19</sup> Աճառեան 1926, հ. 2, 312:

<sup>20</sup> Հայրապետյան 2004, 221, 222, Պետրոսյան 2021 և այլն:

<sup>21</sup> Լիսիցյան 1969, 129, Hovsepyan 2018, Պետրոսյան 2021, Սալմաստում Շերեփ-տիկնիկը պատրաստել են շերեփին որպես թևեր խաչածն փայտ կապելով և շորեր հագցնելով (Կուզնեցով 2007, 199): Անգեղակոթում հաստատվել են Խոյից և Սալմաստից գաղթածներ (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան 1986, հ. 1, 253), հետևաբար՝ տրամաբանական է, որ նոր բնակավայր բերեին ծեսի անվանումը: Ս. Զելինսկին ևս գրում է, որ Պարսկաստանոց գաղթածները շերեփին ասել են «չամչա» (Զելինսկի 1898, 181):

<sup>22</sup> Հովսեփյան 2017, Hovsepyan 2018 և այլն:

<sup>23</sup> 210805-4:

<sup>24</sup> 220410-3:

<sup>25</sup> Բդոյան 1972, 491, Լիսիցյան 1981, 62:

Մի ուշագրավ հանգամանք ևս. Հայաստանի բոլոր գավառներում ընդունված է եղել Համբարձման տոնին կաթնովի մատաղ անելը. նպատակը կաթի առատության ապահովումն էր: Այդ օրվա ամբողջ կաթը բաժանում էին աղքատներին՝ այդ առատաձեռնությամբ ակնկալելով, որ ստանալիք կաթն էլ առատ կլինի<sup>26</sup>: Առհասարակ, Համբարձման տոնին եղել են կաթի առատությանը միտված այլ ծեսեր ևս<sup>27</sup>: «Նույն օրը (խոսքը Համբարձման օրվա մասին է - Հ.Ա.) առանց բացառության ամեն տուն «կաթնով» է եփում. տաքացնում են կաթը, մեջը բրինձ ածում և եփում: Շատ ընտանիքներ էլ կաթ են բաժանում՝ որպես ողորմության»<sup>28</sup>: «Համբարձման օրն (խոսքը Համբարձման հինգշաբթի օրվա մասին է - Հ.Ա.) ամեն ընտանիք պիտի եփեր կաթնավ: Այս մատաղից նա գոնե յոթ ընտանիքի պիտի բաժին ուղարկեր: Մի քանի գյուղերում շատ տարածված էր հավաքած մթերքով և օրվա ամբողջ կաթով ընդհանուր կաթնավ եփելը: Մի խումբ կանայք, գրեթե ողջ թաղը, մեծ կաթսային մեջ միասին եփում էին այդ կաթնավը և թե՛ իրենք նստում՝ ուտում էին Համբարձման կաթնավ, թե՛ բոլոր անցուդարձ անողներին էլ հրավիրում ուտելու, իսկ մնացածն արտերի շուրջն էին շաղ տալիս, որ բերքն առատ լինի: Կաթնավ մատաղը շաղկապված էր այս տոնի հետ հայկական բոլոր գավառներում: Դա անկասկած նույն մագիկ միջոցառումն է: ...Ինչպես մայրն է իր զավակին առատ կաթ տալով նրան առողջություն և աճելու ուժ տալիս, զորացնում, այնպես էլ կաթնով մատաղի միջոցով ուժեղացվում էր արթնացած բնությունը, զորացվում ու հասունացվում էր»<sup>29</sup>: Ե. Լալայանը վկայում է, որ Համբարձման հինգշաբթի, երբ աղջիկների խումբը շրջել է տնետուն, ծաղկեփնջեր բաժանել և ընտանիքից որևէ իր վերցրել վիճակի համար, տանտիրուհին նրանց տվել է կաթ, յուղ, ձու, նաև բրինձ<sup>30</sup>: Այս դրվագը կրկնում է մեր դաշտային աշխատանքների ընթացքում գրանցած՝ կաթնով եփելու համար տնետուն շրջելու և առնվազն յոթ տնից կաթ ու բրինձ հավաքելու ծեսը: Ստեփան Լիսիցյանի այս նկարագրությունը հիմնականում նույնական է վերը բերված դաշտային ազգագրական նյութին, մասնավորաբար՝ կաթնովը որպես մատաղ բնորոշելը, յոթ ընտանիքին բաժին տալը,

<sup>26</sup> Լիսիցյան 1969, 152: Կաթի կապն անձրևի հետ բացատրվում է այսպես. արգելվում էր մածնով կամ կաթով կրակ հանգցնելը: Դրանք կրակի վրա թափելով և այդպիսով այն որոշ չափով գոլորշիացնելով՝ կարող էին պակասեցնել դրա առատությունը (Լիսիցյան 1969, 153):

<sup>27</sup> Համբարձման գիշերն աղջիկները խոտերից և ծաղիկներից ցող էին հավաքում և լցնում կաթի մեջ, որպեսզի կաթն առատ լինի (Լիսիցյան 1969, 152, 273-274): Չորեքշաբթի (Համբարձման հինգշաբթին նախորդող) վաղ առավոտյան մեծերը գնում են դաշտերը, սիրի-սիրի, աստղփուլ և ավելուկի թուփ քաղում ու բերում-դնում կաթնով լի ամանի վրա, որ կաթն առատ լինի (Լալայան 1903, 266):

<sup>28</sup> Լալայան 1898, 259:

<sup>29</sup> Լիսիցյան 1969, 274:

<sup>30</sup> Լալայան 1898, 258:

գյուղի բոլոր կանանց մասնակցությունը կաթնով եփելու ծեսին, մեծ կաթսայում եփելը, միասին ճաշակելը, անցուդարձ անողներին «կաթնավի» հրավիրելը:

Համբարձման կաթնովի և մեր դաշտային աշխատանքների ընթացքում գրանցված անձրևաբեր «կաթնավով մատաղի» ուշագրավ ընդհանրություններից է ժամանակային համընկնումը. ապրիլ-հունիս ամիսներ<sup>31</sup>: Երկու դեպքում էլ համայնքի անդամների նվիրաբերություններով հավաքված մթերքով մեծ կաթսաների մեջ կաթնով է եփվում և որպես մատաղ բաժանվում համայնքի անդամներին: Կապակցված են նաև կաթնովի մատաղի նպատակները. առաջին դեպքում մատաղ է արվում անձրևաբերության կամ անձրևախափանման նպատակով, իսկ Համբարձման ժամանակ նույն կաթնովը եփվում են առատության ապահովման նպատակով<sup>32</sup>:

Սյունիքում տարածված են եղել անձրևաբեր և անձրևախափան այլ ծեսեր ու հավատալիքներ ևս (անձրևաբերներից, օրինակ՝ խաչքարի վրա ջուր լցնելը, խաչքարը, եկեղեցու պատից պոկած քարը կամ խեղդվածի գերեզմանից վերցրած քարը գետի մեջ գցելը, գետի մեջ քարը շրջելը, գետը վարելը, մատաղ անելը և այլն, իսկ անձրևախափաններից, օրինակ՝ փայտերով կամ պարզապես գետնի վրա խաչ անելը և վրան աղ ցանելը, անձրևաբեր նպատակով գետի մեջ գցած քարը հանել-տանել իր տեղը դնելը, խաչքարի վրա կրակ անելը, անձրևի տակ<sup>33</sup> տան առաջնեկի կամ ամենափոքրի հետույքը բացելը և այլն), որոնք բազմաթիվ ընդհանրությունների հետ նաև հաճախ տարբերվել են անգամ հարևանությամբ գտնվող գյուղերում:

### Եզրակացություններ

• «Կաթնովով մատաղը» իր հիմնական բաղադրիչներով՝ հացահատիկ և կաթ, կարելի է մեկնաբանել որպես ջրի, անձրևի համար մատուցվող զոհա-

<sup>31</sup> Հայոց եկեղեցու տոնացույցում Համբարձման տոնը նշվում է Զատիկից 40 օր անց՝ հինգշաբթի: Որպես գատկական շաբթի տոն՝ ունի 35-օրյա շարժականություն և տատանվում է ապրիլի 30-ից մինչև հունիսի 3-ն ընկած ժամանակահատվածում (Ղազարյան և այլ 2002, 532):

<sup>32</sup> Հնարավոր է, որ կաթնառատության նպատակով մինչև Համբարձում ևս կատարվել են ծեսեր, այդ թվում՝ կաթնով եփել, սակայն Համբարձումը եղել է մոզական գործողության և ազդեցության այն գլխավոր կետը, որի ժամանակ պարտադիր էր կաթնով եփելը: Դրանով կարծես ամբողջանում էր և հաստատուն էր դառնում կաթի առատության ապահովմանն ուղղված ողջ նախընթաց փուլը: Ասվածի մասին է վկայում այն, որ Համբարձման օրը նվիրված է եղել կաթին (Լիսիցյան 1969, 152): Հայտնի է, որ Զատիկից մինչև Համբարձում կաթ չեն օգտագործել (Հայոց ավանդական ուսուցող, 2008, 21-22): Ըստ կարգի՝ Մեծ պահքից մինչև Զատիկ ընկած շրջանում նույնպես կաթ չեն գործածել: Իսկ Համբարձմանը, փաստորեն, կաթի մատաղ են արել: Ընդունված պրակտիկա է, որ տվյալ տոնից առաջ այս կամ այն սննդատեսակի պահք պահեն, իսկ հետո այն մատաղ անեն: Ըստ ժողովրդական ընկալման՝ մայիսն անբերրի ամիս էր (Սահակյան, Հովհաննիսյան 2012, 82): Մայիսի վերջից յուր ու պանրի ժողովելու ժամանակն էր (Բազեյան 2008, 35):

<sup>33</sup> Նույնը արվել է կարկուտը կանգնեցնելու նպատակով:

բերություն, որտեղ, սակայն, իրականում գործում է զոհ դրա բազմակիի դիմաց ակնկալիքը կամ սկզբունքը, և կարևորվում է վերջնարդյունքը՝ երկրագործական և անասնապահական արտադրանքները:

- «Կաթնավով մատաղ» ծեսը, ըստ ամենայնի, ի սկզբանե եղել է համայնքում տիկնիկ պտտեցնելու ծեսի բաղադրիչ, որը, ինչ-որ պահից սկսած, կտրվել է՝ դառնալով ինքնուրույն ծես:

- Կաթնով եփելու ծեսն իր կատարման ժամկետով, ծիսակարգով և նպատակով համընկնում է Համբարձման տոնին կաթնով եփելու ծեսի հետ:

- Անձրևաբեր ծեսերը, մասնավորապես տիկնիկ պտտեցնելու և կաթնով եփելու ծեսերը, և Համբարձման կաթնով եփելու ծեսը իրենց բնույթով զուգահեռություն/մատաղ են և ունեցել են բերքառատություն ապահովելու գործառույթ:

### Գրականություն

Աթայեան Ա. 1906, Սալմաստ, Նոր Զուղա, Կ. Աբեան հրատ., 232 էջ:

Աճառեան Հ. 1926, Հայերէն արմատական բառարան, հ. 2, Երեւան, ԵՊՀ հրատ., 688 էջ:

Աճառեան Հր. 1926, Հայերէն արմատական բառարան, հ. 3, Երեւան, ԵՊՀ հրատ., 636 էջ:

Բազեյան Կ. 2008, Ալեքսանդրապոլի ավանդական ուտեստն ու հացկերույթը, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, թիվ 11, Երևան-Գյումրի, էջ 34-39:

Բարթիկյան Հ. 2008, Հայ-հոռոմները (քաղկեդոնիկ հայերը) հունական պարբերականներում, Պատմաբանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 237-260:

Բդոյան Վ. 1972, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 510 էջ:

Զելինսկի Ս. 1898, Վայրի բոյսերի գործածութիւնը, Ազգագրական հանդես, գք. Դ, Թիֆլիս, էջ 177-179:

Լալայեան Ե. 1898, Սիսիան. Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, Նշանաւոր տօներ, Ազգագրական հանդես, գք. Գ, Թիֆլիս, տպարան Մ.Դ. Ռօտինեանցի, էջ 249-260:

Լալայեան Ե. 1903, Բորչալովի գաւառ, Նշանաւոր տօներ, Ազգագրական հանդես, գք. X, Թիֆլիս, Արագատիպ Մ. Մարտիրոսեանցի, էջ 249-268:

Լիսիցյան Ստ. 1969, Զանգեզուրի հայերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 334 էջ:

Լիսիցյան Ստ. 1981, Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), Հայ ազգագրություն և բանահյուսություն, պր. 12, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 142+25 էջ:

Խանզադյան Ս. 1984, Հայրենապատում, 1959-1981, գք. Գ, Երևան:

Խաչատրյան Ռ. 1999, Թալին. նյութեր և ուսումնասիրություններ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, պր. 19, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 280 էջ:

Խտըրեան Ս. 1918, Համառօտ պատմութիւն Կեսարիոյ Նիրզէ գիւղի, առանց տպարանի հիշատակության և տպագրության վայրի, 146 էջ:

- Կուզնեցով Ի. 2007, Համշենահայերի եւ համշիլների մշակոյթում պահպանուած պոնտական ժառանգութիւնը, «Համշեն եւ համշենահայութիւն» գիտաժողովի նիւթեր, Երեւան-Պէյրուք, Համազգայինի «Վ. Սէթեան» հրատ., էջ 181-197:
- Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան 1986, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 992 էջ+993-1008 էջերը՝ լուսանկարներ:
- Հայրապետյան Թ. 2004, Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկհակադիր ընկալումների շուրջ, Պատմաբանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 217-227:
- Հայոց լեզվի բարբառային բառարան 2004, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 3, 426 էջ:
- Հայոց ավանդական ուտեստ 2008, նյութը պատրաստեց Ս. Պողոսյան, Ագրոփզնեսի և գյուղի զարգացման կենտրոն, Երևան, «Ասողիկ», 63 էջ:
- Հարությունյան Հ. 2018, Կաթը և կաթնամթերքը բանահյուսական նյութերում, Պատմություն և մշակույթ, Երևան, էջ 266-375:
- Հովսեփյան Ռ. 2017, Հայաստանի եզդիների «Բուկա բարանե» («Անձրևի հարս») և մյուս անձրևաբեր ծեսերը, Էջմիածին, Ա, էջ 114-146:
- Հովսեփյան Ռ. 2019, Հացահատիկը, անձրևաբեր ծեսերը և վիշապները / Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 318-240:
- Ղազարյան Ա. և ուրիշներ 2002, Համբարձում, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, «Տիգրան Մեծ», 1076 էջ:
- Պետրոսյան Է. 2021, Ծիսական տիկնիկի Նարին/Նուրին մականունների ստուգաբանության փորձ, Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, Երևան, N 2, էջ 59-71:
- Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ. 2012, Հացին առնչվող ժողովրդական պատկերացումներ և հավատալիքներ, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Երևան-Գյումրի, N 15, էջ 80-86:
- Սրուանձտեան Գ. 1874, Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Միէրի դուռ, Կ. Պոլիս, ԵՄ. Տնտեսեանի տպարան, 192 էջ:
- Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1967, հ. 4, Թուրքական աղբյուրներ, Գ, Է. Չելեբի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 347 էջ:
- Ֆրեզեր Ջ. 1989, Ոսկե ճյուղը, Երևան, «Հայաստան», 880 էջ:
- Мифы народов мира 2008, Энциклопедия, электронное издание, Москва, «Советская энциклопедия», 1147 с.
- Hovsepian R. 2018, On the rain-related rituals of Tatev village, Armenia. *Herald of the Social Sciences*, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3 (654), Yerevan, p. 347-356.
- Hunt M. 2016, The Smithsonian Folklife and Oral History Interviewing Guide, Washington, DC, Smithsonian Institute Center for Folklife and Cultural Heritage, 56 p.
- Winick S., Bartis P., Groce N., Kruesi M., Shankar G. 2016, Folklife and Fieldwork: An Introduction to Cultural Documentation. 4th ed. Publications of the American Folklife Center, no. 3. Washington: DC, Library of Congress Publ, 40 p.

### Հավելված

210804-5a/1 (Աշխեն, 65տ, Քարահունջ) - «Մարդ կա, որ անձրև չի գալիս, բերում են սուրբ խաչ, ոչխարի ականջը կտրում են, մատաղ են անում, աղ ու հաց, փլավ են անում, ժողովուրդին բաժանում են, իբր թե անձրևը կյալիս ա»:

210804-5a/2 (Աշխեն, 65տ., Քարահունջ) - «Կաթնավ են անում՝ մատաղ են անում: Մոտակայքում մի կնիկ կար Լենա անունով, էդ կնիկը միշտ տենց անում ա»: Նշում է, որ հիմնականում կաթնովով են մատաղ անում, և որ վերջին անգամ մի քանի, ամենաշատը տասը տարի առաջ են արել:

210804-7a/1 (Ռուզան, 60տ., Ակներ) - «Ան լճից մի քիչ ներքև մեր սարն ա, մենք լյա ընդեղ ենք լյալ, մենք ընդեղ ենք քոն լյալ, մեր կովերը: Հեն ա, տղաս էլ ա ընդեղ: Անասունները տանում են ընդեղ են պահում: Հիմա ընդեղ են: Առաջ ես էլ էի քյում: Դե, էրեխեքը էն ժամանակ իլա փոքր էին, պյան, արանքում քյում էի: Էն ժամանակ, որ քյում էինք սարը, անձրև չէր կյամ, կաթնավ էինք էփյամ, մատաղ... Կաթնավ են իփյում, բրինձով, կաթով: Կաթնավ իփյում են, ասենք, ժողովուրդը հրվաքվում են, ուտում, որ ասենք, անձրև կյա: Տյառնում ա մատաղ են անում, էլի: Կաթնավ մատաղ են անում, որ անձրև կյա»:

210804-7a/2 (Ռուզան, 60տ., Ակներ) - «Հիմա էլ կա. ասենք, էլի գյուղում տեսնում են, որ շատ անձրև չի կյամ, կանայք հավաքվում են, տենց կաթնավ-պյան իփյում են, որ անձրև կյա: Անցած տարի էր, թե նախանցած տարի ստեղ ըրեցին գյուղում: Արալ ըն, էլի, հա, անցած տարի էր, թե նախանցած տարի էր, էլի իփյալ ըն: Մեկի տանը [հավաքվում են], հիմնական տենց տեղ չկա, որ հավաքվեն: Մի քանի հոգով [են հավաքվում]: Ամեն մեկը, ասենք, մի պյան պիտի պիրեր, մատաղի նման որ տյառնա: Յոթ պյանը, որ պիրեն, որ տյառնա մատաղ»:

210804-7a/3 (Ռուզան, 60տ., Ակներ) - «Մարդ կա պետկավ ա օտում էդ կաթնավը, մարդ կա, աղ ա անում: Չէ, էփելուց չէ: Մի տարի, հիշում եմ, մի հատ աղջիկ կար, Սիրվարդը: Ինքը պետկով սիրում էր: Ըոտենց քառասուն կիլոյանոց ղզղանը էփեց, լրիվ պետկ լցրեց մեջը: Դե, ժողովուրդը չկերան կեսը: Հա, էլի էդ անձրևի հետ կապված: Լրիվ պետկ, քաղցր արեց, գիդյաց, թա որ ինքը սիրում ա, լրիվն էլ սիրում են: Ոչ մեկը չկերավ: Երևի մի քսան տարի առաջ: Իրա ճաշակով էր սարքել: Ասենք, մարդ կա, աղով ա սիրում: Աղ ա անում մի քիչ, ուտում»:

210804-7a/4 (Ռուզան, 60տ., Ակներ) - «Կարևորը էն ա, որ յոթ հոգի ուտեն, էլի, մատաղի նման: Ասենք, որ աքլորը, վերցակը մորթում են, մատաղ անում, պիտի յոթ տան պիժանեք: Յոթ հոգի պիտի ուտեն: Յոթ տուն, առանձին տուն պիտի ուտի, որ ասենք, մատաղը...: Մնացածն էլ, ինչքան ուզում են, ուտեն, կարևորը՝ յոթ հոգի ուտեն»:

210804-7ca/5 (c - Սաշիկ, 11տ., a - Ռուզան, 60տ., Ակներ) «...ծեռքիդ փիռնած գնաս հարևանի տուն, առաջինը մեկը անցնի, պիտի տաս իրան», «Հա, մեկ ուրիշին հանդիպում ես, պետք ա տաս իրան»:

210804-7a/1 (Ռուզան, 60տ., Ակներ) - «Ստեղ էլ եմ լսալ, Շինուհայրում էլ, որ քարը շուտ են տամ, որ անձրև գա»:

210804-7a2x (Ռուզան, 60տ., Ակներ) - «Երեխա ժամանակ մենք որ անձրևը շատ էր կյամ, քյում էինք սենց փեղերավ խաչ էինք սարքում, աղը լցնում յիրան անձրևի տակ, որ ասենք, անձրևը կտրվի, որ շատ էր կյամ: Հենց փողոցում խաչ էինք անում, աղը ածում մեջը, որ անձրևը կտրվի, որ շատ էր կյամ»:

210805-1 (Նելլի, 48տ., Գորիս) - Հաստատեց Ակներում անձրևաբեր նկատառումներով կաթնով եփելը:

210805-2d (d - Լարիսա Ավետիսյան, 62տ., Քարաշեն) - Հարցազրույցին (210805-2) մասնակցել է ևս հինգ հոգի՝ Քարաշենի համագյուղացիներից (a - Սևադա, b - Սևադայի դուստր Լիաննա, c - Տիգրան, 30տ., d - Լարիսա Ավետիսյան, 62տ., e - աղջիկ, f - կին), որոնք հաստատում էին գլխավոր բանասացի պատմածը և երբեմն լրացնում էին:

210805-2d/1 - *Պատումի առաջին տարբերակ*. «Ծավարավ կաթնավ էին անում, որ անծրև կյար: Մեր գյուղումը մի ճղուպերի ծառ ունենք: Էդ պոպոքի ծառի տակին կաթսան տիրալ ենք, իփյալ ենք: Հարեվանավ, գյուղումը լրիվ եկալ են: Որ էլ եկյալ չի, ուղարկալ ենք: [Կաթն ու ծավարը] Բոլորը [էին բերում]: Յոթ տանից պիտի պիրին («Յոթ տնից պտի: Մեկը աղը կրոերի, մեկը՝ էն մեկը, մեկը՝ էն մեկը»: - Սևադա, 210805-2a): Հաճարի ծավար («Մեր մոտ վաքշե հաճարն են օգտագործում որպես ծավար: Ձեր մոտ էն բլղուրը, այանը, որ քնուպում են հատիկը: Տա օրիշ ա: Մեր մոտ դաժե սպասը հաճարի ծավարով են էփում», - Սևադա, 210805-2a): Կաթնավ ա՝ կաթն ա, հաճարի ծավարը: Էփում ես կաթի մեջ: Կաթը որ սկսում ա եռալը, մի բաժակ ջուր էլ ածում ես, որ էփի: Ձավարը մեջին էփի: [Ձավարի] քանակը՝ շատը, քիչ, արդեն դու իմանում ես, էլի... Մի էրկու լիտր կաթին մի բաժակ ճուր էք ածում: Ձավարը էլ մի կես, դե, քիչ էլի, ասենք՝ մի կիծ [=բութ]: Արդեն որ էփյում ա, պրծնում, նոր աղը քցում ես: Պիտի աղը վերջում քցես, վեր կաթը կտրի վեջ: Յուղավ էլ օտում են: Մաքուր յուղով կերալ ենք: Օգում ես ճիրիկ ինյի՝ պատառ ծավարի քիչ քցի: Հալա պրնծով էլ ենք էփում: Բրնծով էլ... պատառ բրինձը շատ ենք անում, որ թանձր ինյի: Թանձր ինյի, յուղոտ ինյի մեջը: Սիրուն, համով ...Շատ համով ա ինյում, եթե բրնծով իփյում ես, տենց»:

210805-2d/2 - *Պատումի երկրորդ տարբերակ (երբ փորձեցինք պարզել՝ ո՞վքեր են կաթն ու ծավարը հավաքում)*. «Անծրև որ եկալ չի մի ամիս, էրկու ամիս, արդեն ինգյալ ենք տները, կաթ հըվաքալ: Ամեն մեկից մի կիլո, մի լիտր կաթ: Պիրալ ենք, հըվաքալ: Ամբողջ գյուղից: Դե ջահիլները [պետք է հավաքեն]: Պիտի ջահել լիներ: Զահելները հավաքալ են, պիրալ են, մեծը իփյալ ա արդեն: Յոթ տուն էին մտնում: Կարող ա շատ մտնեին: Բայց ասված օրենքով յոթ տուն էին մտնում: Յոթ տնից բերում էին: (Ոչինչ, հինչ օգում ա, ինյի, հինչ կա՞պ օնի տղա հըվաքի, աղջիկ) Ազաբ են իլյալ, հըվաքալ են, պիրալ, մեր տունը: Մեր գյուղի մեծն էլ մեծ կնիկ ա իլյալ, միշտ ինքն ա իփյալ: Թամար տատին սաղ օրը ճղուպերի ծառին տակին իփյում էր: Իփյալ են, նոր հըվաքվալ են Էդ ծառին տակին, как быдто Էդ օրին արդեն քեփ ա իլյալ: Լրիվը եկալ են, նստալ են, կերալ են, խմալ են: Իրոք վեր, իրոք վեր անծրևը եկալ ա: Ա, դե մեծ եմ իլյալ [, որ տեսել եմ]: Հենգ խոխա ա լյալ ինձ, վեր էդ այաները ես հալա անելիս ենք լյալ: Նոր, էս վերջի, էս մի էրկու տարին ա, վեր չեն անում: Ամենավերջը ասեմ քեզ, իլյալ ա տա 2003 թվին: Էդ 2003 թվականին էս որ ասում եմ Թամար տատիկը մեծ կնյեզ էր, մի 80 տարեկան կնյեզ էր, բայց գյեռ (հպարտ) կնյեզ էր: Հա, ամուսին օներ, աման հինչ էլ օներ: Ինքը [բուժ]բույր ա իլյալ: Քուր ա իլյալ, համ տատմար ա իլյալ: Համ տատմար ա իլյալ, համ ամեն հինչ ա իլյալ: Ինքն էլ էս այաներա բուժող կնյիկ ա իլյալ: Ինքը տենց այաները շատ լավ ա գլի-դացալ: Էդ տարին ինքը ըրավ, կերանք-խմեցինք, տրանից հետո արդեն հիվանդացավ: Երկու տարի հետո, տրա հետի եմ հիշում, որ էրկու տարի հետո Թամար տատիկը 2004, 2005 թվին արդեն վատ էր, չէր կարում: Բա էդ եմ ասում՝ 2003 թիվն էր վերջինը...»:

210805-2d/3 - *Պատումի երրորդ տարբերակ (երբ փորձեցինք պարզել՝ արդյո՞ք տիկնիկ օգտագործում էին ծեսում)*. «Ի, ինքն (երկրորդ պատումում նշվող Թամար տատիկն) անում էր [ծեսի համար տիկնիկ էր սարքում], ղաբաբ ա սարքալ, տիկնիկ ա սարքալ, այան արալ: Է՛, հինչ տեղեր ա տարալ, ստե գյուղումը ցուցահանդես-այան ըրալ: Էդ օրը (երաժշտությունը) միցնյում ին, նվագում ին, պար ին կյամ, երգում ին, պա հի՞նչ ին անում: [Տիկնիկը սարքելու համար] Շոր են փթաթալ, կանֆետ են կախ տվալ, խնձոր են կախ տվալ, ...Աստծուն խնդրալ ենք, որ ինքը... Էդ կնիկն ա սարքալ, որ ասում եմ Թամար տատիկը, Թամար տատիկն ա սարքալ: Ծառի ճյուղը յեր էր օնում, սիրուն, գեղեցիկ

սարքում ինքը: Էն թարմը ճղից կտրում էր, գեղեցիկ պատվանդան [հենակմախք ի նկատի ունի] սարքում, սիրուն տերևներ դնում, գեղեցիկ, ամեն հինչը պառավ էր սարքում, պիրում-տինում ծառին տակին դաբաբ պառավ: Ղաբա. դա գյո՞ւմ ե՞ս՝ հինչ ա: Ղաբան<sup>34</sup>, ստեղերը կախ-կախ ըրած, զանգույակները կախ-կախ ըրած: («Ղաբա՝ ազգային հագուստի մաս», - Տիգրան, 210805-2c) Սարքում, պիրում-տինում տեղ [ճղողպուրի ծառի տակ]: Հույլ էլ կյամ էր, մի պյան էր կախ տամ՝ մի լենթ (ժապավեն) էր կախ տամ, մի պյան էր կախ տամ, հյուր սրտից հինչ տյուա էր կյամ, էլի... Դե, ծառի ճյուղը սարքում էր իրա ճղներավ, հետո ինքը արդեն սիրուն, կանաչ շորերավ կապում էր, կախ էր տամ, սարքում էր: Տերևները, շորերը, կանաչ պյաներավ [շոր] էր սարքում: Կարծեմ խնձորից էր կտրում ինքը, խնձորից, պիրում, սարքում: Բերքատու ծառից էր, էլի, բերում-սարքում:

210805-2a (Սևադա, Քարաշեն) - «Ծիպը [=տոբա, իբրև] մատաղ ա, էլի: Մատաղ են անում, որ [անձրև] կյա»:

210805-2a (Սևադա, Քարաշեն) - «...քըմակը պյաց են ըրալ, եղինջը որ կա, եղինջավ թակալ ըն...»:

210805-2d (Լարիսա Ավետիսյան, 62 տ., Քարաշեն) - «Հորը ըռչնըկն ա, թո [հետույքը կարկուտի տակ] պյաց անի, [եղինջով] թակի, կարկուտը կտրվի»:

210805-4a (Սեդա Փանդունց, 93 տ., Խնձորեսկ):

210805-4a/1 - «Խաճածոյին դե հլե էդ մատաղդ ա, որ ասում են Խաճածոյի: / Խաճածոյի՝ մեր Խնձորեսկի պյանավ ասում էին՝ մեծ-մեծ կանայք ասում էին. «մատաղ ինք անում», «Աստծուն մատաղ ենք անում, որ անձրև կյա»: / Էդ, լա Հին Խնձորեսկան ա եկալ, ալի... / Արդեն վեր տեղափոխվալ ընք, ստեղ էլ ենք անում»:

210805-4a/2 - «Խոխեքը, երեխեքը, ամանը՝ աղջիկ, տղա, ըմըները ծեռքին քինում ին կաթնով հըվաքում, ծավար հըվաքում: Պիրյում տներան, դե ուրանք թաղ էին պիրում լա, դե՝ թաղամաս-թաղամաս, թենց... / Օխտը՝ յոթ տանա կաթըն ալ էին հըվաքում, թե պրինձ - պենը... հատիկ՝ հաճարի հատիկ, ձավար: / Հավաքում են, տյառնում ա թենց մը բան, էլի... / [Հավաքողները] Ոչ մի պյան ո՛չ ասում էին, ո՛չ երգում: Վեր տենց հըվաքվալ են, ասալ են խաճածոյի ենք անում: / [Տվողները] ասում էին՝ բարի ինի, լավ ինի, Աստուծ թո ընթունի, մատաղը Աստված ընթունի, տենց... Մեծ-մեծ կնանիք մեծ-մեծ տենց խոսքերը ասում են, ալի... Հին օրհնության պես մի պյան էր: / Մեծերն ասում են՝ տարին հաջող ինյի, խոխեքը սենց ինյեն, պատերազմը չինյի, խաղաղություն ինյի, հիվանդություն չինյի...»:

210805-4a/3 - «[Ո՞վ էր էփում կաթնովը:] Գյուղի, թաղամասի մեծ կնյեզը, տարիքով կինը, որ էրգյան կյանք տեսած ա: Ճընըպըրումը օջախը սարքում ին, էդ 40 կըլոյանոց ղըզղանը տյունում, յոթ տանա կաթն իըն հըվաքում, թա պրինձ էր ըլնյում՝ բրինձ, թա ըլնում չէր՝ ձավար, հըվաքում էին, ըտեղ էփում էին, նա նհեն խոխեքը, չիմ հըվաքվում ին՝ ըմըները ծեռքին, ածում ին, տանում իրանց»:

210805-4a/4 - «Ավելի շատ [հաճարի ձավար], վեր [բրինձ] իլնյում ա (պրինձը Ղարաբաղան պյանավ են պիրալ), բրինձն ալ են խառնում, հաճարի ձավարն ալ: / Էրկուսը իրա հետ: Մըն հափուր ձավար եմ քցում, մըն հափուր պրինձ: / Էդ ավելի լյավ ա, ավելի քախձըն ա ընյում: / Ծավարը պատառ շուտ են անում, վեր էփյի»:

<sup>34</sup> Ղաբա՝ Ղարաբաղի և Գորիսի բարբառով՝ կանացի երկար զգեստ, կապա (Հայոց լեզվի բարբառային բառարան 2004, հ. 3, 343):

210805-4a/5 - «Թաղամասավ հրվաքվում ին, մեծ-մեծ մարդիկը, մեծ-մեծ կնանիքը: Սենց մըն թըղամասով սաղ հրվաքվում ին, ամա մընը ուրան խոսքն էր ասում, ամա մընը ուրան մտածածն էր ասում, ամա մընը ուրան կյանքում կատարածի մասին էր խոսում, որ կյանքում սենց ա, սենց արա: Զրյուցում ին, մենք ալ խոխեք էինք, ալի... Ասում իմ, հին օրհնությունը վեր կա, ընենց խոխեք են բոլորներովը կաղնած, պյան ըրած, իրանք խոսում ին, բան էին անում...»:

210805-4a/6 - «Հըվաքում էին, փողոցումը մե՛ծ դըզղանը տյունում փողոցումը, էփյում, քյունողուն, քյուլողուն, պըտըհողուն ալի տամ, իբր թա Աստծուն մատաղ են անում, վեր անծրև կյա»:

210805-4a/7 - «Ամբողջ թըղամասավ հրվաքվում էինք, քյունում էինք ընդեղ օտում էին: Աման էին տանում, բան, ըսենց, հրվաքվում ին, օտում...»:

210805-4a/8 - «Ասին մատաղ ենք անում, վեր անծրև կյա, կամ մատաղ ենք անում, վեր անծրև կտրե: Նոյն պյան էր... / Վեր վախտը, [որ] անծրև շատ էր կյամ, էլա էդ մատաղը անում ինք, վուր անծրևը կտրի: / Թա երաշտ ա լյալ, ըրալ են անծրև գյա, թա անծրև ա եկալ, ըրալ են, վեր պարզվի: /... , թե երաշտ ա լյալ, ըրալ ըն, որ անծրև կյա: Թե անծրևային ա լյալ, ըրալ են, վեր անծրևը ետ ըլի, պարզվի: ...տարին մըն էրկու հետի ա, էլի... Ընթանուր ուրան նըշընակված օր չօնի, գիդացի՞ր: ...գարունն ա էլալ, լի, վեր շատ անծրև ա եկալ, ասալ են անենք, վեր անծրևը կտրե, կամ առաջ տարալ են արտերը սերմած, ասալ են անենք, անծրև կյա: Էդ սեզոնում ա լյալ: Ընթանուր օր չօնի, որ ասեմ ամսու էսքանին իլյալ ա»:

210805-4a/9 - «Չէ, չէ. մեր գյուղումը տենց պյան չի լյալ [որ Խաճածողիի Ժամանակ տիկնիկ սարքեին, ման ածեին գյուղում]: Հա, ես պյաներում տեսալ եմ, բայց մեր գյուղումը... [՝ չէ]: Ես էն, ինչ որ մեր գյուղումը կատարվալ ա, էն եմ ասում: / Տե տանը [տիկնիկ] սարքալ են, բայց ման տալ՝ չէ: Տներումը՝ հա, բայց ման կյալ ես տեսալ չեմ: (210805-4b Սերոժ - «Ե՛վ որպես խաղալիք, և՛ որպես թալիսմանատիպի բանի ձևով սարքել են») / Ըտեց միթավուր պյաները Սիսիանում ա ինյում: Մեր Գորիսի ռայոնում տենց պյաներ ես լսած չեմ: Օրինակ՝ մեր նա Սըսիանի միջի, Սըսիանի ռայոնի միջի մե՛ծ տարբերություններ կա: Նրանց բարբառը շատը թուրքերան ա, քանի վըր ընտեղ թուրքերն ալվի շատ են իլյալ, բայց մեր գյուղում էնքան թորք չի բնակվալ»:

210805-4a/10 - «Կարկուտի Ժամանակ խոխան տյուս են հանում, վեռը պյաց անում, որ իբր թա կարկուտը կտրի: Չէ, էդ կարկուտի Ժամանակ են անում, էդ հեչ...»:

210805-4b (Սերոժ, ~70 տ., Խնձորեսկ)

210805-4b/1 - «Արմատը՝ խաչը ճուլի, ճուլը կոչվում ա կենտրոն: Խաչ և ծոլի, խաչը կենտրոնում: Խաչաճուլի, ինձ ըտենց ա թվում...»:

210805-4b/2 - «Ա՛յ, մորքուր [210805-4a], ես հիշում եմ՝ պապան ինձի, էսքան խոխա եմ իլյալ, փռնած տարալ ա Սիպտակ կյումին<sup>35</sup> առաջը, տարալ ա ինձ մատաղի: / Ինձ տանում էին, տանում էին, որ ես էլ մասնակցեմ էդ մատաղին: Ասում ա՝ «Երեխաները որ մատաղին մասնակցում են, մատաղի հզորությունը ավելանում ա»: / Մեծերն էլ են մատաղ կիրալ: Մեծերը նստած, էդ կաթնավը մեծերն էլ են կերել: Կերել են ու խաչ քաշել (որտեղ պատահի): Ինչ լինում ա, խաչ են դրել: Փայտ են դրել... / Ով կարողացել ա, մի խաչի նշան արել են: Որտեղ պատահի»:

<sup>35</sup> Հին Խնձորեսկի գյուղամեջին ասել են Սպիտակ գոմ: Այն եղել է գյուղի հավաքատեղին (210805-4b, Սերոժ, Խնձորեսկ):

## **«ԿԱԹՆԱՎՈՎ ՄԱՏԱՂ»՝ ԱՆՁՐԵՎԱՐԵՐ ԵՎ ԱՆՁՐԵՎԱՆՔԱՆ ԾԵՍ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ**

Ռոման Հովսեփյան, Հասմիկ Աբրահամյան

Ամփոփում

Եղանակի կարգավորման ծեսերից շատերը, մասնավորապես անձրևի ծեսերը, իրենց բնույթով զոհաբերություն են, բայց, բացառությամբ կենդանիների մատաղների, մեր օրերում մատաղ (զոհաբերություն) չեն կոչվում և որպես այդպիսին չեն գիտակցվում: Սյունիքում մեր ազգագրական հետազոտությունների ընթացքում Գորիս և Տեղ համայնքներում գրանցել ենք մի երկակի գործառնություն՝ անձրևաբեր-անձրևախափան ծես՝ «կաթնավով մատաղը», որը բառացիորեն անվանվում և ընկալվում է որպես մատաղ: Զոհաբերվող կաթնովը, որի պարտադիր բաղադրիչները հացահատիկը (հաճար կամ բրինձ) և կաթն են, վկայում են, որ այս զոհաբերության ծեսում գործում է զոհ դրա բազմակի դիմաց սկզբունքը, և ակնկալվում է երկրագործական և անասնապահական արտադրանքների՝ հացահատիկի և կաթի առատություն: Ըստ մեր վերլուծությունների՝ այս ծեսը իր գոյության վաղ շրջաններում հավանաբար տիկնիկով ծեսի մաս է եղել, սակայն հետո առանձնացել է և շարունակվել որպես ինքնուրույն ծես: Անձրևաբեր ծեսերը (մասնավորապես տիկնիկ պտտեցնելու և կաթնով եփելու ծեսերը) և Համբարձման կաթնով եփելու ծեսը իրենց բնույթով մատաղ են և ունեցել են բերքառատություն ապահովելու գործառնություն:

**Բանալի բառեր՝** անձրևաբեր, անձրևախափան, ծես, կաթնով, մատաղ, Սյունիք, հացահատիկ:

## **«КАТНАВОВ МАТАГ» – ОБРЯД В СЮНИКЕ ВЫЗЫВАЮЩИЙ И ПРЕКРАЩАЮЩИЙ ДОЖДЬ**

Роман Овсебян, Асмик Абраамян

Резюме

Многие обряды регуляции погоды, особенно обряды дождя, связаны с жертвоприношением. В ходе этнографических исследований в Сюнике, в общинах Горис и Тег, нами был зафиксирован обряд «молочного жертвоприношения», имеющий двойную функцию: он вызывает и предотвращает дождь. Обряд называется «матаг» и воспринимается как жертвоприношение. Жертвенный молочный суп, обязательными компонентами которого являются зерновые (полба и/или рис) и молоко, доказывает, что в этом ритуале действует принцип – чем жертвуешь, того и ожидаешь: обилие зем-

ледельческих продуктов и продуктов животноводства – зерновых и молока. На ранних этапах своего существования этот ритуал, по всей вероятности, являлся частью ритуала вращения куклы в селе. Однако в дальнейшем он стал самостоятельным ритуалом. Дождевые ритуалы, в частности ритуал вращения куклы по селу и ритуал молочного супа (в том числе и во время праздника Вознесения), по сути, представляют собой жертвоприношение/матэг с определенной функциональной направленностью – обеспечение плодородия.

**Ключевые слова** – вызывание дождя, прекращение дождя, обряд, молочный суп, жертвоприношение, Сюник, зерно.

### "KATHNAVOV MATAGH" – RAIN-MAKING AND RAIN-STOPPING RITUAL IN SYUNIK

Roman Hovsepyan, Hasmik Abrahamyan

#### Abstract

Many of the rituals of weather regulation, especially the rituals of the rain, are sacrifices by their nature, but, except for animal sacrifices, nowadays they are not called so and are not realized as such. During our ethnographic investigations in Syunik, in the communities of Goris and Tegah, we have registered a dual function - rain-making / rain-stopping ritual, "kathnavov matagh" (translated as "sacrifice with milk-soup"), which is literally called and perceived as a sacrifice. Sacrificed milk-soup, the obligatory components of which are grain (emmer or rice) and milk, proves that this ritual has the principle of "an offering (sacrifice) for multiple of the same" and expects abundance of agricultural and animal husbandry products - grain and milk. According to our analysis, this ritual in the early stages of its existence was probably a part of the ritual with a doll, but later separated and continued as an independent one. Some rituals of rain, in particular the ritual of doll-walking and the milk-soup cooking, and the ritual of milk-soup cooking of the "Hambardzum" celebration are sacrifices by their nature and have fertility ensuring function.

**Key words** – rain-making, rain-stopping, ritual, milk-soup, sacrifice, Syunik, grains.